



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. չորրորդ եռամսյակում /վերլուծություն/

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 30473 գործարքներ, որոնց քանակը 2004թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 10.4%-ով, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 18.1%-ով:

2005թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11859 օտարման գործարքների 86.7%-ը կազմել են առուվաճառքները, 12.8%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 39.6%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. չորրորդ եռամսյակում, 2004թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 2.9%-ով, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 10.2%-ով: 2005թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 3830 առուվաճառքի գործարքների 63.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.2%-ով, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 3.1%-ով:

2005թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. չորրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		չորրորդ եռամսյակ 2004թ.	չորրորդ եռամսյակ 2005թ.	երրորդ եռամսյակ 2005թ.
Կենտրոն	157300.0-435900.0	248300.0	325400.0	298200.0
Արաբկիր	112350.0-314600.0	199300.0	261500.0	243700.0
Քանաքեռ-Զեյթուն	89900.0-224700.0	121200.0	159200.0	149300.0
Նոր-Նորք	89900.0-188700.0	107400.0	152600.0	145000.0
Ավան	80900.0-157300.0	102300.0	134400.0	127700.0
Էրեբունի	71900.0-179800.0	97700.0	133100.0	127700.0
Շենգավիթ	71900.0-202200.0	116800.0	162900.0	152700.0
Դավթաշեն	89900.0-202200.0	124500.0	164900.0	154000.0
Աջափնյակ	89900.0-202200.0	114300.0	153200.0	146500.0
Մալաթիա-Սեբաստիա	89900.0-202200.0	113100.0	149200.0	140700.0
Նուբարաշեն	53900.0-112350.0	46500.0	86800.0	77900.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	53900.0-435900.0	126500.0	171200.0	160300.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 6.8%, իսկ տարեկան աճը՝ 35.3%:

2005թ. չորրորդ եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2005թ. չորրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1408 բնակարաններ, որոնց քանակը 2004թ.

չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 1.2%-ով, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 7.7%-ով:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Սարգեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. չորրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			չորրորդ եռամսյակ 2004թ.	չորրորդ եռամսյակ 2005թ.	երրորդ եռամսյակ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	36400.0-72700.0	36100.0	50100.0	48100.0
	Ապարան	13600.0-27300.0	19100.0	23300.0	21500.0
	Թալին	11400.0-25000.0	16000.0	21700.0	21100.0
Արարատ	Արտաշատ	25000.0-50000.0	29900.0	40000.0	36300.0
	Մասիս	36400.0-68200.0	31900.0	51300.0	48300.0
	Վեդի	22700.0-45400.0	21300.0	33800.0	30800.0
	Արարատ	20400.0-45400.0	21300.0	37000.0	34400.0
Արմավիր	Վաղարշապատ	50000.0-95400.0	54500.0	74300.0	71600.0
	Արմավիր	27300.0-59100.0	33500.0	44500.0	42500.0
	Մեծամոր	18200.0-36400.0	16400.0	25100.0	23200.0
Գեղարքունիք	Սևան	18200.0-40900.0	17900.0	30100.0	28600.0
	Գավառ	13600.0-29500.0	16900.0	22300.0	20400.0
	Մարտունի	22700.0-68200.0	18200.0	36100.0	34100.0
	Վարդենիս	9100.0-25000.0	8800.0	19200.0	18000.0
	Ճամբարակ	5900.0-20400.0	9000.0	10700.0	9800.0
Լոռի	Վանաձոր	27300.0-47700.0	32700.0	41200.0	38500.0
	Ստեփանավան	15900.0-29500.0	18400.0	22800.0	21500.0
	Մայիտակ	18200.0-45400.0	22200.0	26900.0	24600.0
	Այվերդի	9100.0-22700.0	13200.0	18200.0	17300.0
	Տաշիր	11400.0-25000.0	12700.0	20000.0	19400.0
	Թումանյան	4100.0-11400.0	5000.0	5200.0	5200.0
	Շամլուղ	2300.0-8400.0	2800.0	2800.0	2800.0
	Ախթալա	6800.0-16100.0	10400.0	10400.0	10400.0
Կոտայք	Արովյան	45400.0-90900.0	55100.0	77200.0	74500.0
	Նոր Հաճն	40900.0-63600.0	39500.0	56100.0	53900.0
	Բյուրեղավան	22700.0-50000.0	25000.0	36500.0	33700.0
	Եղվարդ	31800.0-59100.0	27800.0	47500.0	45100.0
	Հրազդան	20400.0-40900.0	23900.0	28500.0	27500.0
	Ծաղկաձոր	18200.0-68200.0	45900.0	56700.0	53600.0
	Չարենցավան	25000.0-38600.0	22000.0	35300.0	33900.0
Շիրակ	Գյումրի	27300.0-54500.0	38800.0	42500.0	40500.0
	Արթիկ	15900.0-31800.0	15700.0	25500.0	24300.0
	Մարալիկ	8200.0-31800.0	14200.0	21600.0	21000.0
Սյունիք	Գորիս	20400.0-59100.0	19900.0	44900.0	42200.0
	Կապան	22700.0-36400.0	17300.0	31800.0	30500.0
	Սիսիան	18200.0-40900.0	18500.0	27900.0	25500.0
	Մեղրի	13600.0-34100.0	12900.0	23200.0	20600.0
	Ագարակ	9100.0-27300.0	12600.0	17700.0	17300.0
	Քաջարան	9100.0-22700.0	9900.0	16900.0	16500.0

	Դաստակերտ	4500.0-11400.0	6700.0	6400.0	6400.0
Վայոց Ձոր	Վայք	13600.0-36400.0	21200.0	30000.0	27500.0
	Եղեգնաձոր	25000.0-59100.0	27800.0	42400.0	39800.0
	Ջերմուկ	36400.0-81800.0	30900.0	45800.0	43200.0
Տավուշ	Դիլիջան	18200.0-50000.0	22800.0	33800.0	31400.0
	Իջևան	27300.0-72700.0	29000.0	38500.0	35800.0
	Բերդ	18200.0-45400.0	18200.0	25900.0	25000.0
	Նոյեմբերյան	9100.0-22700.0	13800.0	14300.0	14000.0

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 5.8%, տարեկան աճը՝ 44.0%:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1505 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 346, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1159: 2004թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 13.1%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 11.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 13.5%-ով: 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 14.5%-ով, ընդ որում Երևանում նվազել է 4.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 21.7%-ով:

2005թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. չորրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		չորրորդ եռամսյակ 2004թ.	չորրորդ եռամսյակ 2005թ.	երրորդ եռամսյակ 2005թ.
Կենտրոն	136300.0-908800.0	249900.0	340700.0	323900.0
Արաբկիր	90900.0-454400.0	201100.0	272700.0	260000.0
Քանաքեռ-Զեյթուն	68200.0-272600.0	122100.0	162500.0	155700.0
Նորք-Մարաշ	90900.0-454400.0	173700.0	181900.0	180000.0
Ավան	90900.0-363500.0	103100.0	138800.0	134500.0
Էրեբունի	68200.0-227200.0	98900.0	138700.0	132400.0
Շենգավիթ	68200.0-204500.0	118000.0	168300.0	155100.0
Դավթաշեն	90900.0-409000.0	125800.0	169200.0	159500.0
Աջափնյակ	68200.0-272600.0	115400.0	157100.0	154100.0
Մալաթիա-Սեբաստիա	68200.0-409000.0	114300.0	152200.0	145100.0
Նուբարաշեն	36400.0-113600.0	47400.0	89800.0	85300.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	36400.0-908800.0	133600.0	179300.0	171400.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ եռամսյակային աճը կազմել է 4.6%, տարեկանը 34.2%:

2005թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. չորրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			չորրորդ եռամսյակ 2004թ.	չորրորդ եռամսյակ 2005թ.	երրորդ եռամսյակ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	27300.0-81800.0	43500.0	51400.0	49400.0
	Ապարան	13600.0-36400.0	19700.0	24600.0	23100.0
	Թալին	13600.0-36400.0	17600.0	23300.0	22800.0
Արարատ	Արտաշատ	22700.0-50000.0	31100.0	41200.0	37600.0
	Մասիս	22700.0-68200.0	32600.0	52800.0	49700.0
	Վեդի	13600.0-40900.0	24600.0	35000.0	32000.0
	Արարատ	13600.0-45400.0	23000.0	38500.0	35500.0
Արմավիր	Վաղարշապատ	36400.0-81800.0	55400.0	75800.0	72800.0
	Արմավիր	22700.0-59100.0	34300.0	46200.0	44200.0
Գեղարքունիք	Սևան	9100.0-40900.0	21100.0	35300.0	30700.0
	Գավառ	9100.0-36400.0	19900.0	24300.0	21600.0
	Մարտունի	13600.0-45400.0	20500.0	38700.0	35800.0
	Վարդենիս	9100.0-31800.0	10900.0	21500.0	20100.0
	Ճամբարակ	4500.0-22700.0	11200.0	12400.0	11000.0
Լոռի	Վանաձոր	22700.0-50000.0	35400.0	42300.0	39700.0
	Ստեփանավան	13600.0-36400.0	24600.0	26900.0	26800.0
	Սպիտակ	13600.0-36400.0	24500.0	28700.0	25900.0
	Ալավերդի	9100.0-31800.0	14700.0	19600.0	18300.0
	Տաշիր	9100.0-31800.0	14100.0	21200.0	20700.0
	Թումանյան	4500.0-18200.0	5600.0	6700.0	6600.0
	Շամլուղ	2300.0-13600.0	3900.0	4200.0	4100.0
	Ախթալա	9100.0-22700.0	11000.0	11900.0	11900.0
Կոտայք	Աբովյան	31800.0-90900.0	56800.0	81300.0	77100.0
	Նոր Հաճն	18200.0-68200.0	40400.0	57500.0	55500.0
	Բյուրեղավան	18200.0-45400.0	25500.0	37500.0	35300.0
	Եղվարդ	22700.0-63600.0	28500.0	49800.0	47700.0
	Հրազդան	18200.0-40900.0	24700.0	30600.0	29700.0
	Ծաղկաձոր	31800.0-68200.0	49300.0	57900.0	55700.0
	Չարենցավան	18200.0-45400.0	22600.0	38100.0	36400.0
Շիրակ	Գյումրի	27300.0-59100.0	45800.0	44200.0	43300.0
	Արթիկ	9100.0-40900.0	16700.0	27600.0	26400.0
	Մարալիկ	13600.0-36400.0	14800.0	23500.0	23100.0
Սյունիք	Գորիս	18200.0-59100.0	21100.0	46000.0	43400.0

	Կապան	13600.0-40900.0	18200.0	34000.0	32500.0
	Միսիան	9100.0-40900.0	19400.0	28900.0	27200.0
	Մեղրի	13600.0-36400.0	14300.0	24400.0	22400.0
	Ագարակ	9100.0-36400.0	14100.0	20000.0	19200.0
	Դաստակերտ	4500.0-18200.0	7500.0	8600.0	8300.0
Վայոց Ձոր	Վայք	9100.0-36400.0	22100.0	31000.0	29100.0
	Եղեգնաձոր	18200.0-59100.0	28300.0	45100.0	42100.0
	Ջերմուկ	13600.0-40900.0	22100.0	31200.0	29700.0
Տավուշ	Դիլիջան	13600.0-45400.0	28400.0	35300.0	33100.0
	Իջևան	18200.0-45400.0	29500.0	39900.0	37100.0
	Բերդ	9100.0-40900.0	18500.0	26800.0	26000.0
	Նոյեմբերյան	9100.0-31800.0	15500.0	15400.0	14400.0

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ եռամսյակային աճը կազմել է 5.7%, տարեկանը՝ 40.0%:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Ընդհանուր առմամբ, 2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 5328.75 հա /այդ թվում 74.45 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 5011.31 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 5124.60 հա հողերի /այդ թվում 73.33 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 4846.94 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 30 միավոր /24.17 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր, ինչպես նաև 13 միավոր /7.76 հա/ հատուկ պահպանվող տարածքի հող:

Օտարված 187.82 հա /այդ թվում 0.74 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 149.33 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 16.32 հա /այդ թվում 0.39 հա Երևանում/, որից 15.05 հա գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 3148.82 հա, որից 3119.61 հա գյուղատնտեսական նշանակության են:

Քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>						<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ հողերի				բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	82	9.04	58	26.51	0	0.00	195	21.67	50	15.63
Արագածոտն	38	265.35	4	0.49	9	0.11	141	162.49	113	10.54	3	0.28

Արարատ	53	262.69	159	16.58	13	0.53	357	304.95	200	20.31	3	0.06
Արմավիր	123	1437.78	0	0.00	18	0.58	409	1681.83	165	16.93	2	0.10
Գեղարքունիք	21	42.29	15	1.60	6	9.30	36	46.94	17	2.13	0	0.00
Լոռի	0	0.00	3	0.12	3	0.36	55	60.36	16	1.47	0	0.00
Կոտայք	22	64.45	29	2.91	18	39.52	232	126.77	400	39.67	9	1.60
Շիրակ	60	28.50	48	1.74	28	0.78	80	71.15	24	2.06	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	48	85.45	4	0.32	1	0.04
Վայոց Ձոր	11	131.90	0	0.00	5	0.04	19	8.61	5	1.04	0	0.00
Տավուշ	3	0.64	7	0.97	0	0.00	60	64.78	7	0.71	0	0.00
Ընդամենը	331	2233.60	347	33.45	158	77.73	1437	2613.33	1146	116.85	68	17.71

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են 3530 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ. չորրորդ եռամսյակում՝ 3840/, այդ թվում 1768-ը՝ գյուղատնտեսական նշանակության /2151/, 1719-ը՝ բնակավայրերի /1674/, 30-ը՝ արդյունաբերական օբյեկտների /15/, 13-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ:

2005թ. չորրորդ եռամսյակում հողերի առուվաճառքներից 760 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով, /2004թ. չորրորդ եռամսյակում՝ 1137/, այդ թվում 84-ը՝ /10.19 հա/ Երևանում /138/, իսկ 676-ը՝ /2239.85 հա/ մյուս մարզերում /999/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 321 միավորը /2204.76 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2004թ. չորրորդ եռամսյակում՝ 620/, 322-ը՝ /29.64 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /462/, 100-ը՝ /9.96 հա/ հասարակական կառուցապատման /49/, 9-ը՝ /0.17 հա/ արդյունաբերական օբյեկտների /6/ և 8-ը՝ /5.50 հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրված 1768 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 321-ը իրականացվել են աճուրդների, 76-ը՝ դատարանի վճիռների և 10-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	34	263.48	25.2	3334.1	258.5	104	121.08	359.5	6741.0	2029.6
Ապարան						6	4.15	89.9	764.0	300.1
Թալին	3	1.64	44.9	51.7	47.2	27	32.38	89.9	755.0	265.4
Ծաղկահովիտ						4	4.89	76.4	943.7	140.2
Արարատի մարզ										
Արտաշատ	19	8.56	119.2	2256.0	1378.8	152	93.44	332.6	5392.8	1102.2
Մասիս	9	10.97	188.7	559.1	415.0	61	52.70	179.8	6741.0	1382.7
Վեդի	24	226.12	38.2	2250.3	373.1	142	153.33	202.2	4494.0	830.8

Արմավիրի մարզ										
Արմավիր	8	82.31	22.5	494.3	247.2	133	125.83	292.1	4044.6	690.6
Բաղրամյան	68	1249.30	33.7	128.3	62.2	102	1434.79	89.9	674.1	408.6
Վաղարշապատ	47	106.17	20.6	2006.6	392.1	122	75.75	440.4	8988.0	1168.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						5	1.43	188.7	494.3	298.6
Ճամբարակ	19	37.89	143.8	786.0	291.1	3	2.40	44.9	539.3	117.6
Մարտունի						11	3.98	44.9	1797.6	431.2
Սևան								44.9	449.4	174.2
Վարդենիս						13	23.74	27.0	530.3	174.9
Լոռու մարզ										
Ալավերդի						5	1.53	161.8	2471.7	331.7
Գուգարք						3	3.49	224.7	2696.4	850.4
Սպիտակ						1	0.09	224.7	1483.0	470.5
Ստեփանավան						11	11.40	89.9	2247.0	283.5
Տաշիր						21	20.48	44.9	449.4	182.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	17	24.00	125.8	2269.5	660.6	130	63.62	269.6	11235.0	2786.6
Եղվարդ	3	40.00	120.4	122.2	121.3	85	52.47	170.8	11235.0	1912.0
Հրազդան	2	0.45	229.2	350.5	289.8	17	10.69	112.4	2696.4	662.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.20	1163.9	1163.9	1163.9	46	40.26	247.2	1685.3	366.4
Ամասիա						15	17.51	36.0	235.9	84.4
Անի						18	13.29	107.9	359.5	185.5
Աշոցք								44.9	112.4	95.0
Արթիկ	53	20.14	105.4	1321.2	531.6	1	0.09	62.9	1078.6	153.8
Սյունիքի մարզ										
Գորիս						11	11.95	89.9	719.0	289.5
Կապան						5	4.14	53.9	898.8	206.6
Մեղրի						3	0.49	179.8	1905.5	407.1
Սիսիան						29	68.87	44.9	674.1	168.9
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	109.30	33.7	193.2	94.4	17	8.17	116.8	2696.4	1164.1
Վայք	8	22.60	24.7	224.7	94.4	2	0.44	53.9	1528.0	452.4
Տավուշի մարզ										
Բերդ						13	4.38	44.9	898.8	307.6
Իջևան	3	0.64	366.3	685.3	474.1	6	2.34	238.2	1797.6	743.4
Նոյեմբերյան						37	56.31	44.9	3748.0	395.1

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 1216 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 260-ը իրականացվել են աճուրդների, 5-ը՝ ուղղակի վաճառքների և 8-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների		
	Միավորների քանակ	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակ	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	1220.0	175.3	175.3	175.3	108	98448.0	112.4	3595.2	1948.2
Ապարան						1	1870.0	112.4	629.2	158.3
Թալին	3	3718.0	110.1	116.9	115.7	3	4600.0	44.9	359.5	67.9
Ծաղկահովիտ						1	520.0	44.9	359.5	63.3
Արարատի մարզ										
Արտաշատ	122	121021.0	215.7	539.3	324.9	49	66156.0	134.8	2696.4	710.2
Մասիս	2	900.0	325.4	336.9	330.0	96	83092.0	134.8	8988.0	895.7
Վեդի	35	43830.0	47.2	413.4	388.7	53	51430.0	112.4	988.7	521.7
Արմավիրի մարզ										
Արմավիր						61	71391.0	134.8	2247.0	856.5
Բաղրամյան						6	7200.0	80.9	269.6	105.5
Վաղարշապատ						97	90009.0	134.8	4494.0	1188.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	2320.0	134.8	898.8	303.1
Ճամբարակ	11	12000.0	85.4	112.3	94.4			44.9	134.8	72.4
Մարտունի	2	2400.0	58.4	67.4	62.9	6	6870.0	89.9	449.4	156.8
Սևան	2	1600.0	680.8	680.8	680.8	1	400.0	89.9	898.8	117.6
Վարդենիս						7	11728.0	44.9	224.7	70.9
Լոռու մարզ										
Այվերդի						3	3760.0	67.4	269.6	95.0
Գուգարք						8	6808.0	67.4	2336.9	472.0
Սյիտակ						4	3700.0	62.9	449.4	99.5
Ստեփանավան	3	1200.0	276.4	276.4	276.4	1	400.0	44.9	269.6	72.4
Տաշիր								44.9	134.8	61.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	28	28450.0	276.4	820.2	638.1	171	162516.0	134.8	6741.0	1429.5
Եղվարդ						190	193437.0	134.8	6741.0	1575.7
Հրազդան						36	38419.0	134.8	8988.0	996.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	35	8134.3	474.1	4750.2	1455.2	19	15276.1	112.4	1528.0	260.9
Ամասիա								44.9	134.8	61.1
Անի						3	3500.0	67.4	179.8	83.7
Աշոցք								40.4	134.8	54.3
Արթիկ	12	6363.0	38.2	629.2	179.9	2	1810.0	67.4	921.3	117.6
Սյունիքի մարզ										
Գորիս						1	590.0	67.4	539.3	199.0
Կապան						1	1000.0	67.4	629.2	185.5
Մեղրի						1	200.0	67.4	404.5	104.0
Միսիան						1	1400.0	67.4	404.5	117.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	8899.0	67.4	1123.5	209.6
Վայք								76.4	629.2	101.8
Տավուշի մարզ										
Բերդ								44.9	629.2	76.9
Իջևան	4	3000.0	220.2	289.9	255.0	2	2460.0	67.4	1348.2	312.1
Նոյեմբերյան						4	3480.0	44.9	629.2	98.0

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 23 գործարքներ 15.14 հա մակերեսով,

ընդ որում 16-ը՝ Արարատի /3.97 հա/, 2-ը՝ Գեղարքունիքի /2.00 հա/, 1-ը՝ Լոռու /0.22 հա/ և 4-ը՝ Շիրակի /8.94 հա/ մարզերում:

2005թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3490 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 84.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 48.3%-ով, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 29.5%-ով:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 147 բնակարանների, 105 անհատական բնակելի տների, 710 հասարակական, 72 արտադրական նշանակության օբյեկտների, 2439 միավոր հողերի, 17 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Այգետնակի վարձակալության գործարք չի գրանցվել:

2005թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 373 վարձակալության գործարքների քանակը 2004թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 2.8 անգամ, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 3.5 անգամ:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալվել են 7408.52 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում՝ 19.67 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 7057.09 հա կազմում են գյուղատնտեսական, 72.79 հա՝ բնակավայրերի, 62.06 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 25.63 հա՝ էներգետիկայի օբյեկտների, 5.00 հա՝ անտառային, 40.18 հա՝ ընդերքի օգտագործման համար նախատեսված, 80.65 հա՝ ջրային, 38.15 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 7.30 հա՝ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 2407.39 հա, որից 2342.69 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Իսկ առավել փոքր մակերեսով հողեր վարձակալվել են Վայոց Ձորի մարզում՝ 141.39 հա, որից 138.55 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 3194.20 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. չորրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր /</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	19	1286.00	181	551.34
Արարատ	5	150.00	97	860.32
Արմավիր	0	0.00	45	157.97
Գեղարքունիք	33	1549.20	353	793.49
Լոռի	0	0.00	44	225.87
Կոտայք	0	0.00	104	127.17
Շիրակ	3	209.00	167	623.81
Մյունիք	0	0.00	39	210.99
Վայոց Ձոր	0	0.00	54	138.55

Տավուշ	0	0.00	30	173.39
Ընդամենը	60	3194.20	1114	3862.90

2005թ. չորրորդ եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2005թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3162 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.4%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 27.9%-ով, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 42.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /15.6%/, առանձնատների /15.7%/ և հողերի /20.2%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1517 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 37.5%-ով, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 19.9%-ով:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 851.95 հա մակերեսով հողեր /այդ թվում՝ 61.39 հա Երևանում/, որից 753.99 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 424.23 հա, որից 423.77 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2005թ. չորրորդ եռամսյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 37 և 18 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2004թ. չորրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 11.3%-ով, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 45.0%-ով: 2005թ. չորրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 32.7%:

2005թ. չորրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2005թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 4747 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 5.0%-ով, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 14.0%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /51.7%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն